

դիր ասելով Հայաստանի խնդիր ենք հասկանում, նրա ազատութեան, անկախութեան եւ ընդարձակման խնդիր, ապա ուրեմն դա առաջ մղուել կարող է միայն եւ միայն Հայաստանի հայութեան ոյժերով: Սահմանամերձ հայութիւնը բաղդատարար աւելի, իսկ դադութների հայութիւնը նուազ չափերով օժանդակիչ ազդակներ միայն լինել կարող են, բայց ոչ երբեք՝ վարիչ եւ ղեկավար մեր ազգային — որ է՝ Հայաստանի — քաղաքականութեան,

XII

Այսպէս ուրեմն, երբ մենք խօսում ենք մեր ազգային — ասել է՝ Հայաստանի — քաղաքականութեան մասին, որպէս վարիչ, առաջ մղիչ ոյժ առնելու է երկրի ժողովուրդը միայն, դրսի հատուածների օժանդակիչ — կամ խանդարիչ — արժէքը չմոռանալով հանդերձ: Հայաստանի ժողովուրդն է միայն, որ պայքարել կարող է եւ յաջողցնել ի վերջոյ ինչպէս իր ազատութիւնը, այնպէս նաեւ իր անկախութիւնը եւ սահմանների ընդարձակումը:

Իսկ քաղաքական ի՞նչ հոսանքներ կան Հայաստանում, որ տարբեր իրենց դիրքից, արժէք են ներկայացնում այս խնդրում: Միայն երկուսը — Հ. Յ. Դաշնակցութիւնը եւ համայնավար կուսակցութիւնը: Եւ որովհետեւ վերջինս մասամբ միայն հայկական է, իսկ առաւելապէս օտար, ոուս համանուն կուսակցութեան հայկական հատուածը, ապա՝ որովհետեւ նրա «ազգային քաղաքականութիւնը» չէ ընդունում Հայաստանի խնդիր, այսինքն՝ տարբեր կամ աւելի ինչ քան կայ այսօր, որովհետեւ Զինովիեմիւնի ու Ռատէքներ ղերնով արդէն իսկ «լուծուած» է հռչակել հայկական դատը, ապա ուրեմն Հ. Յ. Դաշնակցութիւնը կայ եւ մնում է միակ ոյժը երկրի մէջ, որ կենդանի է պահում ազատ, անկախ եւ միացեալ Հայաստանի նշանախօսքը, եւ որ պատեհ առթիւ նորէն պիտի ստանան ղեկավարողի դերը Հայաստանի ազգային քաղաքականութեան խնդրում:

Հ. Յ. Դաշնակցութիւնից եւ համայնավարներից դուրս, դժբախտաբար թէ բարեբախտաբար քաղաքական ուրիշ հոսանքներ

չկան Հայաստանում: Լաւ է թէ վատ, պիտի ընդունինք փաստը: Ռամկավարներ, սոցիալ-դեմոկրատներ, էսէրներ եւ յարակից տարբեր — դուցէ գոյութիւն ունին անհատապէս բոլոր պարագաներում նրանք քաղաքական հոսանքներ եւ ազդակներ չեն եղած եւ չեն մանաւանդ այժմ:

Վերցնենք դադութները:

Այստեղ եւս նոյն հիմնական եւ հակոտնեայ հոսանքները: Ճիշդ է, Ռամկավարները աւելի են քանակով եւ որակով, քան համայնավարները, բայց քանի որ նրանք չեն ներկայացնում ազգային ուրոյն քաղաքականութիւն եւ ամբողջովին իւրացրել են համայնավարների «Հայաստանեան քաղաքականութիւնը», ապա ուրեմն այս խնդրում եւս նրանք չեն ներկայացնում ինքնուրոյն ազդակ, թէկուզ օժանդակի դերում:

Աւելին դեռ: Թող Ռամկավար հոսանքը լինի հայկական, թող նրա հետեւողները լինին, իրենց իմաստով, գերազանց հայեր, բայց որովհետեւ նրանք հայրենասիրտ, դադութածին տարբեր են եւ ոեւէ արմատ չունին Հայաստանի իրականութեան մէջ, այդ պատճառով էլ նրանց Հայաստանեան քաղաքականութիւնը — լինի կողմնակի ձեւով — աւելի վնաս է տուել եւ կը տայ Հայաստանի դատին, քան՝ օգուտ, քանի որ անհո՞ղ է միանգամայն, լաւագոյն պարագային՝ սոսկ զգացմունքի արդիւնք:

Հ. Յ. Դաշնակցութեան արտահայտաստանեան հատուածներին եւս, ինչ խօսք, միայն օժանդակողի դեր է վերապահուած այս խնդրում: Եւ մեծ է, անխոխարինելի այդ դերը յատկապէս եւ մանաւանդ նրա համար, որ ոչ միայն այդ հատուածների կուսակցական կազմը մեծապէս Հայաստանեան է, Հայաստանի սահմաններից եկած, տակաւին նրա հետ հարազատ-հարա ներքին թելերով կապուած տարբերից բաղկացած, այլ եւ այն պատճառով, որ արտասահմանեան Հ. Յ. Դաշնակցութիւնը իր ազգային ողջ քաղաքականութիւնը հիմնում է երկրի իրականութեան վրայ, իր բոլոր քայլերը բխեցնում է Հայաստանի իրականութիւնից, մշտարթուն, ուշադիր ունկնդիր է հայրենիքից եկած ձայներին եւ թեւադրանքներին: